

ՄԱՐԶԱԿԱՆ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈՒԼՏԻՊԼԵՔՍՈՒՄ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ

Հանրային մուլտիպլեքսում հանրապետական և մայրաքաղաքային սփռմամբ տեսալսողական մեդիածառայություն մատուցող լիցենզավորված ընկերությունների տեսալսողական ծրագրերում՝ «ՇԱՐԿ» ՍՊ ընկերության «5-ՐԴ ԱԼԻՔ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերության «ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔ», «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ընկերության «ԿԵՆՏՐՈՆ», «ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲ ընկերության «ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ», «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության «ՖԱՍԹ-ՍՊՈՐՏՍ», «ՖՐԻ ՆՅՈՒՋ» ՍՊ ընկերության «ՖՐԻ ՆՅՈՒՋ», «ԱՐՓԻ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության «ՆՈՒՌ», դիտարկվել է մարզական թեմատիկ ուղղվածությամբ հաղորդումները. ժամանակահատված՝ 2023 թվականի **հոկտեմբերի 23-29-ը** և 2024 թվականի **հունվարի 22-28-ը**:

«ՇԱՆԹ» ՍՊ ընկերության «ՇԱՆԹ», «Ա-ԹԻՎԻ» ՍՊ ընկերության «Ա-ԹԻՎԻ», ««:ԲՈՒՆ» ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ-Ի «:ԲՈՒՆ ԹԻՎԻ», «ԱՐՄԵՆԻԱ ԹԻՎԻ» ՓԲ ընկերության «ԱՐՄԵՆԻԱ», «ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերության «21 ԹԻՎԻ» ծրագրերը նշյալ ժամանակահատվածում մարզական թեմատիկ ուղղվածությամբ առանձին տեսալսողական ծրագրեր չեն ունեցել: Պատճառը, թերևս, որոշ տեսալսողական ծրագրերի ուղղվածությունն է՝ «:ԲՈՒՆ ԹԻՎԻ»-ին գիտակրթական բազմահարթակ մեդիա է, «21 ԹԻՎԻ»-ին երաժշտական-ժամանցային, իսկ «ՇԱՆԹ», «Ա-ԹԻՎԻ», «ԱՐՄԵՆԻԱ» տեսալսողական ծրագրերը մարզական թեմաներին անդրադառնում են լրատվական հաղորդումների ընթացքում, որոնց անդրադարձ չի կատարվել:

«Մարզական տեսալսողական հաղորդում - մարզական իրադարձությունների հեռարձակումների, մարզական լրատվական ամենօրյա նորությունների, սպորտի այդ թվում զանգվածային սպորտի, ֆիզկուլտուրային-ստորջարարական, ստորջ կենսակերպի քարոզման և մարզիկների մասին, մարզիկների հաղթանակների և պարտությունների վերլուծության մասին տեսալսողական հաղորդումներ, որոնք խթանում են բնակչության շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի, սպորտի նկատմամբ



հեղափոխության բարձրացմանը, նպաստում սպորտի տարածմանը, առողջ սպորտակերպի արմատավորմանը» (մեջբերում՝ «Թեմայիկ ուղղվածության չափորոշիչները, դրանց հասկացությունները սահմանելու մասին» ՀՌՀ որոշումից):

Հոկտեմբեր ամսվա դիտարկման ժամանակահատվածում Հեռարձակողների եթերացանկում ընդգրկված են եղել մարզական թեմատիկ ուղղվածությամբ **12** տեսալսողական հաղորդում՝ **8-ը** ընկերությունների սեփական արտադրանքն է, **1-ը** հայրենական արտադրության է, **3-ը**՝ օտարերկրյա:

Հունվար ամսվա դիտարկման ժամանակահատվածում Հեռարձակողների եթերացանկում ընդգրկված են եղել մարզական թեմատիկ ուղղվածությամբ **37** տեսալսողական հաղորդում՝ **14-ը** ընկերությունների սեփական արտադրանքն է, **1-ը** հայրենական արտադրության է, **22-ը**՝ օտարերկրյա¹:

«ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔ», «ԿԵՆՏՐՈՆ», «ՖՐԻ ՆՅՈՒՋ», «ՆՈՒՌ» տեսալսողական ծրագրերը հեռարձակում են միայն սեփական արտադրության մարզական հաղորդումներ, «5-ԲԴ ԱԼԻՔ» և «ՖԱՍԹՄՊՈՐՏՍ» ծրագրերի եթերացանկում բացի սեփական արտադրանքից, ներառված են նաև օտարերկրյա արտադրության հաղորդումներ, իսկ «ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ»-ը հեռարձակում է միայն հայրենական արտադրության հաղորդումներ:

Հանրապետական և մայրաքաղաքային սիոնամբ տեսալսողական մեդիաձառույթություն մատուցող լիցենզավորված ընկերությունների տեսալսողական ծրագրերի՝ հեռուստալսարանին մատուցվող մարզական թեմատիկ ուղղվածության հաղորդումները մարզական կարևորագույն խաղերի վերահեռարձակումներ են, մարզական ամենօրյա լուրեր, հայրնի մարզիկների մասին պարմող վավերագրական և կենսագրական ֆիլմեր ու հաղորդաշարեր, լրատվական-վերլուծական հաղորդումներ, սպորտային թեմաներով զրույցներ, քննարկումներ ու հարցազրույցներ, տարբեր մարզաձևերին նվիրված նախագծեր, որոնք նպատակ ունեն ոչ միայն նպաստել այս կամ այն մարզաձևի տարածմանը, այլև քարոզել առողջ սպորտակերպ, մարզաշխարհի տարբեր իրադարձությունների անդրադարձ, ավիրոարշավներ և այլն:

¹ Տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի «Հեռարձակման տեսակները» բաժնում «ՖԱՍԹ ՄԵՂԻԱ» ՍՊ ընկերության «ՖԱՍԹՄՊՈՐՏՍ» ծրագրի՝ որպես վերահեռարձակում նշված հաղորդումները վերլուծությունում ներառվել են օտարերկրյա տեսալսողական ծրագրերում:



1. «ՇԱՐԿ» ՍՊ ընկերության «5-ՐԴ ԱԼԻՔ» ծրագիրը հոկտեմբեր ամսին՝ դիտարկման ժամանակահատվածում, հեռարձակել է մարզական թեմատիկ ուղղվածությամբ **4** հաղորդում՝ սեփական արտադրության **1** հաղորդաշար, որը նպատակ ունի աշխարհին ներկայացնել հայ պրոֆեսիոնալ մարզիկներին, և հայտնի մարզիկների մասին օտարերկյա արտադրության (Մեծ Բրիտանիա, ԱՄՆ) **3** վավերագրական, կենսագրական ֆիլմ:

Հոկտեմբեր ամսին մարզական թեմատիկ ուղղվածության նշյալ հաղորդումները կազմել են հանրօգուր հաղորդումների շաբաթական եթերաժամի 3,8 %-ը:

Հունվար ամսին՝ դիտարկման ժամանակահատվածում, հեռարձակել է մարզական թեմատիկ ուղղվածությամբ **3** հաղորդում. սեփական արտադրության հոկտեմբեր ամսին ցուցադրված հաղորդաշարը և հայտնի մարզիկների մասին օտարերկյա արտադրության (ԱՄՆ, Գերմանիա) **2** վավերագրական, կենսագրական ֆիլմ::

Հունվար ամսին մարզական թեմատիկ ուղղվածության նշյալ հաղորդումները կազմել են հանրօգուր հաղորդումների շաբաթական եթերաժամի 3,6 %-ը:

2. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերության «ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔ» ծրագիրը հոկտեմբեր ամսին՝ դիտարկման ժամանակահատվածում, հեռարձակել է մարզական թեմատիկ ուղղվածությամբ սեփական արտադրության **1** հաղորդում, որը *կազմել է հանրօգուր հաղորդումների շաբաթական եթերաժամի 2,3 %-ը:*

Հունվար ամսին՝ դիտարկման ժամանակահատվածում, հեռարձակել է մարզական թեմատիկ ուղղվածությամբ սեփական արտադրության **2** հաղորդում: *Նշյալ հաղորդումները կազմել են հանրօգուր հաղորդումների շաբաթական եթերաժամի 2,5 %-ը:*

3. «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ընկերության «ԿԵՆՏՐՈՆ» ծրագիրը հոկտեմբեր և հունվար ամիսներին՝ դիտարկման ժամանակահատվածում, հեռարձակել է մարզական թեմատիկ ուղղվածությամբ սեփական արտադրության **2-ական** հաղորդում:



Եվ՝ հոկտեմբեր, և՛ հունվար ամիսներին մարզական թեմատիկ ուղղվածության նշյալ հաղորդումները կազմել են հանրագույր հաղորդումների շաբաթական եթերաժամի 3,6%-ը:

4. «ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲ ընկերության «ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ծրագիրը հոկտեմբեր և հունվար ամիսներին՝ դիտարկման ժամանակահատվածում, հեռարձակել է մարզական թեմատիկ ուղղվածությամբ հայրենական արտադրության **1-ական** հաղորդում, որը արտաճանապարհային ավտոարշավների, Հայաստանի գեղեցկագույն վայրերը բացահայտելուն նվիրված ավտոարշավային հաղորդաշար է:

Հոկտեմբեր և հունվար ամիսներին մարզական թեմատիկ ուղղվածության նշյալ հաղորդումները համապատասխանաբար կազմել են հանրագույր հաղորդումների շաբաթական եթերաժամի 1,1% և 0,5%-ը:

5. «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության «ՖԱՍԹ-ՍՊՈՐՏՍ»՝ մարզական ուղղվածությամբ տեսալսողական ծրագիրը հունվար ամսին՝ դիտարկման ժամանակահատվածում, հեռարձակել է մարզական թեմատիկ ուղղվածությամբ **23** հաղորդում² սեփական արտադրության **3** հաղորդաշար, և օտարերկրյա արտադրության **20** տեսալսողական ծրագիր, որոնք հիմնականում մարզական կարևորագույն խաղերի վերահեռարձակումներ են և հայտնի իրադարձություններին նվիրված նախագծեր:

Հունվար ամսին մարզական թեմատիկ ուղղվածության նշյալ հաղորդումները կազմել են հանրագույր հաղորդումների շաբաթական եթերաժամի 74,7 %-ը:

6. «ՖՐԻ ՆՅՈՒԶ» ՍՊ ընկերության «ՖՐԻ ՆՅՈՒԶ» ծրագիրը հոկտեմբեր ամսին՝ դիտարկման ժամանակահատվածում, հեռարձակել է մարզական թեմատիկ ուղղվածությամբ սեփական արտադրության **2** հաղորդում:

Հոկտեմբեր ամսին մարզական թեմատիկ ուղղվածության նշյալ հաղորդումները կազմել են հանրագույր հաղորդումների շաբաթական եթերաժամի 8,2 %-ը:

² Ընկերությունը հանրային մուլտիպլեքսում ալթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սիտման մրցույթի հաղթող է ճանաչվել 2023 թվականի սեպտեմբերի 15-ին, այդ պարճառով հոկտեմբեր ամսվա տեղեկատվությունը ներկայացված չէ:



Հունվար ամսին՝ դիտարկման ժամանակահատվածում, հեռարձակել է մարզական թեմատիկ ուղղվածությամբ սեփական արտադրության **4** հաղորդում:


*Հունվար ամսին մարզական թեմատիկ ուղղվածության նշյալ հաղորդումները կազմել են հանրագույր հաղորդումների շաբաթական եթերաժամի **9%-ը**:*

7. «ԱՐՓԻ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության «ՆՈՒՌ» ծրագիրը հոկտեմբեր և հունվար ամիսներին՝ դիտարկման ժամանակահատվածում, հեռարձակվել է մարզական թեմատիկ ուղղվածությամբ սեփական արտադրության **2-ական** հաղորդում, որոնք *համապարասիանսարար կազմել են հանրագույր հաղորդումների շաբաթական եթերաժամի **2,3 և 1,4 %-ը**:*

Հ.Գ. Ներկայացված տեղեկատվությունը կից պատկերված է նաև գծապատկերներով:



Հոկտեմբեր և հունվար ամիսներին հաղորդումների քանակական պատկերը



Հոկտեմբեր և հունվար ամիսների տոկոսային պատկերը

